Ստացեք հոգևոր լիցք Վարդապետության սերտման միջոցով



Պատկերացրեք, որ հեծանվորդ եք, իսկ ճանապարհը ձեր կյանքն է: Հավանաբար նկատում եք, թե որքան հարթ է ճանապարհի առաջին հատվածը, սակայն հետո հանդիպում եք խոչընդոտների ու թեքությունների, որոնք հաղթահարելու համար ավելի մեծ ջանք է պահանջվում: Մտածեք, թե ինչ հոգևոր լիցք է ձեզ անհրաժեշտ կյանքում հաջողությամբ տեղաշարժվելու և ձեզ հանդիպող հավանական խոչընդոտներն ու դժվարությունները հաղթահարելու համար:

Ուսումնասիրեք վարդապետության սերտման կարևոր սուրբգրային արտահայտությունները, որոնք սովորել եք և փնտրեք հատվածներ, որոնք առնչվում են ձեր անձնական ճամփորդությանը: Ձեր գծանկարի համապատասխան թվերի կողքին գրեք վարդապետության սերտման այն հատվածի հղումը, որն օգնել է կամ կարող է օգնել ձեզ.

1. Պահպանեք հոգևոր լիցքը և ամեն օր աճեք:
2. Խուսափեք խոչընդոտից կամ հաղթահարեք այն՝ հավատալով հատվածում ուսուցանվող ճշմարտություններին և գործելով դրանց հիման վրա:
3. Ապավինեք Փրկչի զորությանը և բարձրացեք՝ իրականացնելու ձեր հոգևոր նպատակները:

Վարդապետության սերտման ձեր ընտրած և ձեր գծանկարում ներառած յուրաքանչյուր հատվածի համար գրեք ձեր մտքերը հետևյալ գաղափարներից առնվազն մեկի վերաբերյալ.

- Փորձառություն, երբ զգացել եք վարդապետության սերտման հատվածի ճշմարտությունը և կարևորությունը:
- Ինչպե՞ս կարող եք հատվածի վարդապետությունը կամ սկզբունքն ավելի լավ կիրառել ձեր կյանքում:
- Ըստ ձեզ՝ այս հատվածն ինչո՞ւ կօրհնի ձեզ Փրկչի զորությամբ և ինչո՞ւ կմեծացնի ձեր հոգևոր լիցքը:
- Այդ վարդապետությունն ինչպե՞ս է մեծացրել ձեր սերը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_385-teacher_handout-1